

Տեղեկություն հարկադիր բուժման մասին

Բուժող բժիշկները որոշել են, որ Դուք պետք է մնաք հիվանդանոցում:

Ինչքան է տևում այս որոշումը, որը կոչվում է հարկադիր բուժում:

Այն տևում է այնքան, որքան բուժող բժիշկը կամ դատավորը համարում են անհրաժեշտ:

Ի՞նչ դեր է խաղում դատավորը:

Դատավորը ստուգում է, թե արդյոք հարկադիր բուժումը օրինական է: Դա տեղի է ունենում հաջորդ չորս օրվա ընթացքում: Հարցի քննության ժամանակ Դուք իրավունք ունեք անվճար թարգմանչի:

Ե՞րբ է հարկադիր բուժումը օրինական:

Երբ հոգեկան հիվանդության պայմաններում գոյություն ունի լուրջ սպառնալիք Ձեզ կամ ուրիշների համար, եւ ոչմի այլ խնամքի միջոց հնարավոր չէ կիրառել:

Ի՞նչ կարող է Ձեզ համար անել հիվանդի փաստաբանը:

Նա պաշտպանելու է Ձեր իրավունքները եւ զբաղվելու է Ձեր հարցերով: Դատավորի հետ հարցի քննության ժամանակ հիվանդի փաստաբանը պաշտպանելու է Ձեր շահերը:

Ո՞վ կարող է դադարեցնել հարկադիր բուժումը:

Ինչպես բժիշկը այնպես էլ դատավորը:

Դատավորը նախադրյալների վերանայու դեպքում հարցի քննության ժամանակ դադարեցնում է հարկադիր բուժումը: Այլպես նա սահմանում է, թե երբ է տեղի ունենալու հաջորդ դատական ստուգումը:

Բժիշկը պարտավոր է հարկադիր բուժումը դադարեցնել հենց որ դրա նախապայմանները այլևս գոյություն չունենան: Դրանով իսկ հաջորդ դատական ստուգումը տեղի չի ունենում:

Դիմեք հիվանդի փաստաբանին հավելյալ հարցերի դեպքում:

Հեռ.

Ի՞նչ հավելյալ օգնություն կարող եք մեզանից սպասել:

Մենք օգնում ենք Ձեզ բժիշկների, խնամող անձնակազմի եւ թերապեւտների հետ խոսելիս: Մենք անկախ ենք հիվանդանոցից եւ պարտավորվում ենք պահպանել գաղտնիություն: Մեր աշխատանքը Ձեզ համար անվճար է: Դուք կարող եք մեզ դիմել նաեւ հարկադիր բուժումից հետո: